

նելու ժամանակը, բացակայեց այս յազմական խօսքը՝ «ամենայն ինչ կատարեալ է» :

Պէտք է հետևիմ իմ Փրկչիս գնացած ճանապարհին, նորա պէս պիտի բարեոք պատերազմը պատերազմեմ, քանի որ ողջ եմ, և ամենայն իմ գլխիս եկածների մէջը, աղօթք անելով՝ ասեմ, արա՛ ինձ հետ ինչ որ քո կամքդ է, միայն քո խաղաղութիւնդ տուր ի՛նձ :

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ՀԱՅՍՏԱՆԵԱՅՑՍ ԲԱՌԱՓԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵԼԵՑԻՈՅ ՊԱՏԱՐԻԱՐԻՆ.

(Շարունակ. Արար., 1886 թ. Գ.) :

## ԳԼ. Ը.

Ղազար Զահկեցուն յաջորդ ընտրուեց Կ. Պօլսոյ պատրիարք Մինաս Ակնեցի, որ գալով Ս. Էջմիածին՝ 1751 թուի Սեպտեմբերին, Ս. Խաչի տօնին սուրբ օծումն ընդունեց և 1753 թուի Մայիսի 12 ին վախճանուեց ու թաղուեց Ս. Գայիանէի գաւթի ձախ կողմը, հազիւ մի տարի ութ ամիս վարելով հայրապետական իշխանութիւն :

Մինաս Ակնեցու Էջմիածնի կաթողիկոս ընտրուելուց յետոյ Կ. Պօլսոյ պատրիարք կարգուեց Գէորգ վարդապետ Աբանդցի, բայց կարճ ժամանակով, որովհետեւ Յակովբ Նալեան, որ Երուսաղէմումն էր, այնտեղ ուխտի գնացած մեծ ազգեցութեան տէր Ակնեցի Եպուք ամիրային հաճոյանալով՝ նորա հետ Կ. Պօլիս վերադարձաւ և նորա հղօր ազգեցութեամբ 1752 թուին ինքն Կ. Պօլսոյ պատրիարք կարգուեց, իսկ Երուսաղէմայ միաբանութիւնից կանխաւ ընտրուած Գրիգոր Շլթայակրի աշակերտ Թէոփորոս կամ Թորոս վարդապետ՝ Երուսաղէմայ :

Մինաս Ակնեցու մահից յետոյ Ս. Էջմիածնի միաբանից ժողովը որոշեց Յակովբ Նալեանին կամ Կեղեցի Սահակ Ահագինն ըստ հաւանութեան ազգի կաթողիկոս ընտրել : Կ. Պօլսում գումարուած ժողովում թէ՛ Նալեան և թէ՛ Սահակ Ահագին հրաժարուեցին ընտրելիութիւնից, ուստի հաճութեամբ ժողովոյն՝ կաթողիկոս ընտրուեց Էջմիածնի բաղմամեայ և իմանկութենէ հեռէ բաղմաշ-

խոստ միտքան Ղարաղաշ մականուամենալ Աղէքսանդր Բիւզանդացի, որ Պետրոս Քիւթուրի հետ շատ տառապանք էր կրել Ղազար Զահեցուց:

Աղէքսանդր Բ. Բիւզանդացի ժողովականաց թախանձանքին չըկարողանալով զիմադրել, յանձն առաւ կաթուղիկոսական կոչումն և ընդ ցամաք ճանապարհորդելով ու ժողովրդեան այցելելով՝ հասաւ Էջմիածին, 1754 թուի Մարտի 6 ին սուրբ օծումն ընդունեց, և մի և կէս ամեայ իշխանութիւնից յետոյ 1755 թուի Նոյեմբերի 11 ին վախճանուեց ու թաղուեց Էջմիածնի արեւմտեան դրան հարաւային կողմը, զանգակոտան տակ:

Էջմիածնի միաբանական ժողովը յայտնելով Կ. Պօլսոյ պատրիարքարանին Աղէքսանդր Բ-ի մահը, իբրեւ կաթուղիկոսական ընտրելի իւր կողմից ազգի հաւանութեան առաջարկեց դարձեալ Յակոբ Նալեանին և Կեղեցի Սահակ Ահագինին:

1755 թուին Սահակ Ահագին ընտրուեց կաթուղիկոս, բայց մի տարի Կ. Պօլսում, երեք տարի ևս Կարնոյ Մուտուրիան գիւղի Ս. Լուսաւորիչ և Հնձուց գիւղի Կարմիր վանքում մնաց. աղգը տեսնելով որ Սահակ իւր պաշտօնատեղին չէ շտապում գնալ, Զմիւռնիոյ առաջնորդ և Կ. Պօլսոյ նուիրակ Սիմէօն վարդապետ երեւանցու և Զմիւռնիայի նոր առաջնորդ նշանակուած Աբրահամ վարդապետ Աստապատոյու ջանքով 1759 թուին կաթուղիկոսական նոր ընտրութեան ժողով գումարեց Կ. Պօլսում, որ գահընկէց հրատարակելով Սահակ Ահագին՝ կաթուղիկոս ընտրեց Էջմիածնի կաթուղիկոսական տեղակալ Յակոբ Շամախեցուն, որ այն ժամանակ Կարինում՝ Սահակ Ահագնի մօտն գտնուելուն համար նոյն Աբրահամ վարդապետ Աստապատոյու, ի կողմանէ Կ. Պօլսոյ պատրիարքարանի պատգամաւորութեամբ իմանալով իւր կաթուղիկոս ընտրուիլը՝ Սահակ Ահագինից հաշիւները առաջաւ, եկաւ Էջմիածին և նոյն 1759 թուի Նոյեմբերի 24 ին սուրբ օծումն ընդունեց:

Յակոբ Ե. Շամախեցի իմանկութենէ Ս. Էջմիածնում դաստիարակուելով, իւր բնաձիր ուղիմութեամբ Էջմիածնի միաբանութեան մէջ առաջնակարգ և շատ կարեւոր դիրք էր ստացիլ. նա մեծ ազդեցութիւն ունէր միաբանից վերայ իբրեւ նոցա մեծագոյն մասի ուսուցիչն ու դաստիարակը. այս ազդեցութեան նպատուէր և այն հանգամանքը, որ լինելով հմուտ արքունական և գա-

տաւորական կարգերին՝ ամեն բանում խորհրդակից էր եղել նախ քան ինքն կաթուղիկոսներին և ինքն է պատրաստելիս եղել նոցա համար հարկաւոր թղթերի նախագաղափարը: Յակովբ Ե. Շամախեցի շինեց Երևանայ Զորագեղի անապատում հայրապետարան և բարձր պարիսպներով շրջապատեց:

Մինչ Յակովբ Ե. Շամախեցի էջմիածնում շինութեամբ և բարեկարգութեամբ էր զբաղուած՝ Կ. Պօլսում, դրդմամբ ուն Բաղիշեցի Մանուէլ քահանայի, յուզուեց կաթողիկոսեան խնդիրը: Մանուէլ քահանայ իբրև ջատագով մայրենի եկեղեցու՝ հրովարտակ ստացաւ և ձերբակալելով շատ կաթողիկէներ՝ նաւարանի աքսորավայրը աքսորեց: Յակովբ պատրիարք յուզումները դադարեցնելու համար՝ եպարքոսի ատեանում երաշխաւորելով որ, աքսորեալները անտեղի կասկածի համար միայն են աքսորուած, նոցա ազատեց և Մանուէլ քահանային իբրև խռովարար աքսորել տուեց:

Յակովբ Ե. Շամախեցի երեք տարի ութ ամիս հայրապետական իշխանութիւն վարելով՝ վախճանուեց 1763 թուին և թաղուեց Ս. Գայիանէի վանքի գաւթում աջ կողմը:

Շամախեցի Յակովբ Ե. - ից յետոյ 1763 թուին Ս. էջմիածնի միաբանական ժողովով և ողբի հաճութեամբ ընտրուեց Արմէօն Երևանցի և նոյն թուի Ապրելի 20 - ին կաթուղիկոսական սուրբ օծումն ընդունեց:

Արմէօն դեռ կաթուղիկոս չեղած՝ նուիրակութեամբ շատ տեղեր շրջած և ականատես եղած՝ լաւ ծանօթ էր Հայոց գրութեանը: Այս ծանօթութեամբ՝ իւր իշխանութիւնը փառաւորեց այնպիսի մեծագործութեանց ձեռք զարկելով՝ որ ամբողջ Կովկասումն առաջինն էին: Այսպէս կաթողիկ քարոզիչների և մխիթարեանց կաթողիկամիտ գրքերի մուտքը Հայոց մէջ կարճելու համար կարգաւորեց Տօնացոյցը, որով սահմանեց հայ նշանաւոր տօները շաբաթ օրերը հանգիստաւոր կերպով տօնել և մեծի պահոյց մէջ Ս. Յովհաննէս Երուսաղէմայ հայրապետի և Ս. Յովհաննէս Օձնեցու հետ տօնել ունիթոռների դէմ քաջ ախոյեան Յովհաննէս Որոտնեցու, Գրիգոր և Մովսէս Տաթևացիների յիշատակը: Կարնոյ Կարմիր վանքի նուիրակ Գէորգ վարդապետին, որ կաթողիկոսեան սերմեր էր ցանում Ախալցխայի մէջ՝ տաճկաց արքունի հրովարտակով բերել տուեց էջմիածին և սաստիկ պատուհասե-

լուց յետոյ մեղայական ստանալով՝ արձակեց: Տաճկաց արքունի հրովարտակով հալածեց կաթոլիկ այլազգի քարոզիչներին, մուսուլման ժողովրդեանը յուզողութիւն բերեց տեղական պաշտօնեաների միջոցաւ սաստելով, իսկ հոգեւորականներին էջմիածին բերել տալով՝ յանդիմանեց, պատժեց և ի սրտէ զլջալ տալով՝ արձակեց:

Միաբանից սենեակների հիւսիսահողմը առանձին գաւթով դրուող շինեց և բարեկարգեց: Մի քանի կրօնական գրքեր գրեց սատակ յարձակուելով հռովմէականների վերայ և խրատելով ժողովրդին՝ որ հեռի կենան այդ մուսրեցուցիչներից՝ իրանց մարմնաւոր և հոգեւոր փրկութիւնը միայն Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ տեսնելով: Կաթոլիկոսարանում սահմանեց մի Յիշատակարան (Ջամբռ, տպեալ ի Ս. էջմիածին ի 1873 ամի), որ ամեն մի կաթոլիկոս իւր ժամանակի անցքերը, և իւր կատարած գործերը մէջը արձանագրի, և ինքն սկիզբն դրեց գործին՝ մինչև ինքն հայրապետների պատմութիւնը համառօտելով, էջմիածնի բոլոր կալուածների անունները և նոցա արտօնագրերի ու հրովարտականների պատճէնները արձանագրելով, մանրամասն նկարագրելով հայրապետարանի կարգ ու կանոնները, հայրապետների՝ քրիստոնեայ և մահմետական թագաւորների, երուսաղէմայ և Կ. Պօլսոյ պատրիարքների, Աղուանից, Սոյո և Աղթամարայ կաթոլիկոսների հետ ունենալիք յարաբերութեանց ձևերը \*):

Հայոց ազգը զանազան տէրութեանց մէջ ցրուած լինելով, պայմանական յարաբերութեան մէջ էր Ս. էջմիածնի Մայր Աթոռի հետ: Այս իսկ պատճառով հայրապետները միայն Պարսկաստանի Հայոց վերայ լիակատար իրաւունք և անմիջական յարաբերութիւն ունէին, իսկ արտասահմանեան Հայոց վիճակները երկու կարգ էին բաժանուած, նուիրակական և տէրունի:

Նուիրակական վիճակները երեք տարին միանգամ նուիրակ ընդունելով, նորա հետ և սուրբ միւռնոն և հայրապետի օրհնութիւնը, նուիրակական հասոյթը միայն էին տալիս. իսկ տէրունի վիճակները ենթարկւում էին ուղղակի էջմիածնի իրաւասութեանը, որ կարգում էր առաջնորդներ և ստանում էր առաջնորդական և նուիրակական հասոյթները: Շատ տեղեր այս կարգը խանգարուած

(\*) Ջամբռ գլ. Թ. — ԺԲ. եր. 58—99:

էր և Սիմէօն կաթողիկոս վերահաստատելով կանոնաւորեց նախկին կարգը:

Ռուսաստանեայք Ղազար Զահկեցու կարգած Բարսեղ եպիսկոպոս Փառակեցուց զգուած՝ դուրս գալով Էջմիածնի իրաւասութիւնից՝ Ազուանից կաթողիկոսներին էին ենթարկելու: Սիմէօն կաթողիկոս այս պառակտումը բառնալու համար Թիֆլիզեցի Ղաւիթ եպիսկոպոսի պատուիրակութեամբ մի արծաթեայ ոսկեզօծ տուփի մէջ ամփոփած սուրբ մասունքներ ընծայ ուղարկելով Ռուսաց եկատարինէ Բ. կայսերօւհուն՝ խնդրեց Ռուսաստանի Հայոցը դարձեալ Էջմիածնի իրաւասութեան ենթարկել: Կայսերօւհին 1768 թուի Յունիսի 30 - ին տուած հրովարտակով\*) ոչ միայն Սիմէօնի խնդիրը կատարեց, այլ և թանկագին ընծաներ ևս ուղարկեց: Իսկ Սիմէօն կաթողիկոս ի ցոյց երախտագիտութեան՝ գրեց կայսերական տան համար գոհացողական մաղթանքը, որ գործ է դրվում Ռուսաստանի Հայոց եկեղեցիներում կայսերական տօներին:

Բացի Ռուսաստանի հայերից, որոնց առաջնորդ և նուիրակ կարգեց Սիմէօն սկզբում՝ Մինաս արքեպիսկոպոսին և յետոյ Արղուիթեան Յովսէփ արքեպիսկոպոսին, Էջմիածնի տէրունի վիճակ էին Տաճկաստանում Զմիւռնիա իւր թեմերով և Բաղդադ ու Բասրա քաղաքները և Հնդկաստան: Նուիրակական վիճակներն էին իրանց թեմերով Տաճկաստանում — Ա. Կ. Պօլիս, Բ. Թրակիա (Թէքիրդաղ), Գ. Խրիմ և Բեսարաբիա, Դ. Ռումելիա, Ե. Անատոլիայի հիւսիսային մասը, Զ. Անատոլիայի հարաւային մասը, Է. Կարին և ըն:

Սիմէօն կաթողիկոս միմիայն Ա. Էջմիածնի Մայր Աթոռը կենտրոն և հայրապետը իսկապէս ամենայն Հայոց կաթողիկոս կացուցանելու համար աշխատումէր Էջմիածնի գերիշխանութեան տակ Սիւր, Աղթամարայ և Ազուանից կաթողիկոսներին մի մի վիճակաւորներ համարել տալ, իսկ Երուսաղէմայ և Կ. Պօլսոյ պատրիարքներին՝ մի մի արքեպիսկոպոս: Եւ Կ. Պօլսում, որպէս Տաճկաստանի զլիսաւոր կենտրոնում, կամենումէր Զմիւռնիոյ առաջնորդ և Կ. Պօլսոյ նուիրակ Աստապատցի Աբրահամ եպիսկոպոսին կա-

(\*) Պատմ. կաթողիկոսաց Էջմիածնի, գործ Մսերայ Մագիստրոսի Մսերեանց, տպել ի Մոսկվա, ի 1876 ամի. եր. 161—163:

Թուղիկոսական փոխանորդ կարգել, որ չրյաջողեց, որովհետև թէ՛ Յակովբ Նալեան, որ վախճանուեց 1764 թուին Յուլիսի 18-ին և թէ՛ նորանից յետոյ Բասմաճեան Գրիգոր պատրիարք չէին կամենում այդ. և Գրիգոր Կ. Պօլսոյ երեւելիներից ժողով գումարելու, նոցա խորհրդով և արքունի հրամանով՝ փոխանորդութեան թեկնածու Աբրահամ եպիսկոպոսին աքսորեց Կ. Պօլսից: Գրիգոր պատրիարք 1773 թուին հրաժարուելով պատրիարքութիւնից Կիպրոսի առաջնորդութեան պատրուակով գնաց Եւրոպա\*): Գրիգոր Բասմաճեանին յաջորդեց 1771 թուին Էջմիածնի նուիրակ Կաղզուանցի Զաքարիա եպիսկոպոս, որ Հայաստանեայց եկեղեցւոյ նախանձախնդրութեամբ սկսեց հալածել լատինամիտներին:

Սիմէօն կաթողիկոսի ժամանակ Աղուանից կաթողիկոսութեան պատճառով խռովութիւնը շատ սաստկացած էր և այս խռովութիւնը սկսուած էր 1674 թուից, ոմն Սիմէօն եպիսկոպոսի՝ առանց Աղուանից տան ընտրութեան և Էջմիածնի ընդհանրական հայրապետի հաւանութեան կաթողիկոսանալովը և առնելով Գանձասարու աթոռի գոյքն՝ իւր գիւղը առանձնալովը: Յակովբ կաթողիկոս Զուղայեցի տեսնելով այս ինքնակոչ Սիմէօնի ապօրէն վարմունքը՝ բանադրումէ նորան և Աղուանից երկրից ոմն Երեմիա տրեղայի եպիսկոպոս և կաթողիկոս օծելով ուղարկումէ Գանձասար: Յակովբ կաթողիկոս Զուղայեցի՝ ինքնակոչ Սիմէօնին սանձահարելու համար բերել է տալիս Էջմիածին՝ և ստորագրութիւն է առնում, որ նա չըհամարձակուի եպիսկոպոս ձեռնադրել, միւռոն օրհնել, և իւր ազգականներից կաթողիկոս օծել:

Յետ ժամանակաց Սիմէօն ու Երեմիա վախճանվումեն, և ինքնագլուխ կաթողիկոսանումէ ոմն Եսայի, բայց իւր սխալն զգալով՝ զիմումէ Էջմիածին Նահապետ կաթողիկոսին, որ վաւերացնումէ նորա կաթողիկոսական իշխանութիւնը, և ահա բանադրուած Սիմէօնի ազգականներից ոմն Ներսէս ինքնագլուխ կաթողիկոս է օծվում. Աղէքսանդր Զուղայեցին Աղուանից այս երկու կաթողիկոսներին ևս բերել տալով իւր մօտ՝ Ս. Էջմիածնի տաճարում ժողով է կազմում, ուր պարտաւորվումէ Ներսէս

(\*) Ըստ Զամէանի «չորաւ յերկիր քրիստոնէից, ուր և կայ մինչև ցայսօր՝ հոգացեալ միայն զփրկութիւն հոգւոյ իւրոյ» (Հատ. Գ. եր. 877). Է. Զամէան «զփրկութիւն հոգւոյ» ասելով կաթողիկոսութիւն է հասկանում:

և բանադրվում, իսկ եսայի վերահաստատվումէ կաթուղիկոսական իշխանութեան մէջ, պայմանաւ՝ որ Աղուանից կաթուղիկոսները իբրև յաջորդ Ս. Գրիգորիսի՝ Լուսաւորչի յաջորդից, այսինքն էջմիածնի կաթուղիկոսից ստանան Աղուանից կաթուղիկոսական օծումն:

Վախճանումէ եսայի կաթուղիկոս, և բանադրեալ ներսէսը օգուտ քաղելով պատերազմական յարձակումներէ, առպատակութիւններից, աւերմունքներից և էջմիածնի կաթուղիկոսների շուտ շուտ մէկը միւսին յաջորդելուց՝ սկսումէ վարել կաթուղիկոսական իրաւունք, մինչև որ Ղազար Չահկեցին պարտաւորեցնումէ նորան խոստովանել իւր բանադրուած լինելը, և ապա էջմիածնին հաւատարմութեան, և իւր ցեղից ապօրինաբար կաթուղիկոս չօծելու երդմնագիր առնելով՝ արձակումէ, թոյլ տալով վարել Աղուանից կաթուղիկոսութիւնը: Սակայն դեռ ներսէս չլրվածանալով՝ նորա ազգականներից մինը, դեռ պատանի հասակով, Իսրայէլ արեղայ Գանձակու Շահ - Վերդի խանի ձեռնտութեամբ օծվումէ կաթուղիկոս և նորից սկսվումէ երկպառակութիւնը:

Սիմէօն Երեւանցի կաթուղիկոսանալով էջմիածնում, ինքնընծայ Իսրայէլին հրաւիրումէ էջմիածին, որ եթէ Աղուանից երկիրը կրկամենայ, վերահաստատէ նորան կաթուղիկոսական իշխանութեան մէջ, սակայն մինչ Իսրայէլ պատիր պատճառաբերութեամբ յետաձգումէր էջմիածին գալը, Շուշույ Փանահ - Խանը հայ մելիքների մէջ երկպառակութիւնը աւելի ևս զօրացնելու համար մի կուսակցութեան պարագլուխ հանգիստանալով՝ յանձնարարական գրով յանուն Սիմէօն կաթուղիկոսի յիսուն անձանց հետ Յովհաննէս եպիսկոպոսին ուղարկումէ էջմիածին՝ Աղուանից կաթուղիկոս ձեռնադրելու համար. Փանահ - Խանը գրումէ մի թուղթ ևս Երեւանայ խանի վերայ, որ ստիպէ Սիմէօնին՝ Յովհաննէսին անպատճառ Աղուանից կաթուղիկոս օծել:

Ոչ հայերի թախանձանքը, և ոչ Երեւանայ խանի սպառնալիքն ու խոշտանգանքը ներգործութիւն ունեցան Սիմէօնի վերայ. Սիմէօն Յովհաննէսին չօծեց, և համադրումէր աղուանցիներին որ արդէն օծուած Իսրայէլի հետ հաշտուեն, և երկպառակութիւնը մէջտեղից բառնան: Սիմէօն կաթուղիկոս այսպէս էր վարվում, որովհետև լու գիտէր որ Երեւանայ և Շուշույ խաները միմեանց կամակա-

տար հանգիստանալով՝ կամենում են Հայոց դէմ մի դաշնակցութիւն կազմել. իսկ Շուշույ Փանազ—Խանի՝ կաթուղիկոտական գործին խառնուելը համարում էր նպատակաւոր մի բան, որով նա հայ մե-  
լիքների մէջ արդէն եղած ներքին երկպառակութիւնը զօրացնե-  
լով՝ կամենում էր նոցա թուլացնել և այսպէս բոլորին տիրել:

Յովհաննէս եպիսկոպոս իւրայինների հետ Էջմիածնից դուրս գալով, գնաց Գանձասար և հակառակ Սիմէօնի համոզանաց կա-  
թուղիկոս օծուեց: Գործը աւելի ևս դժուարացաւ. որովհետեւ,  
Խորայէլի կուսակիցները Գանձակի Շազ—Վերդի խանի ձեռքով  
սպառնալիք էին գրում Սիմէօնին՝ որ Խորայէլին հաստատի կաթու-  
ղիկոս, ապա թէ ոչ՝ մեծ արիւնհեղութեան պատճառ կրգառնայ.  
Նոյնը կրկնում էին Յովհաննէսի կուսակից մելիքները, Փանազ-  
խանի ձեռքով և Երեւանայ Հիւսէին—Ալի խանի միջոցաւ: Սիմէօն՝  
խաներին պատասխանելով որ՝ նոցա գործը չէ հայ հոգեւորական  
գործերին խառնուիլ, Հայերին գրում է որ, Խորայէլն էլ Յովհաննէսն  
էլ ապօրինաբար են կաթուղիկոսացած, պիտի գան Էջմիածին,  
և որին Աստուած կըկամենայ՝ նա կըհաստատուի կաթուղիկոս:

Հայք զգուած այս երկպառակեալ դրութիւնից՝ առաջարկեցին  
Սիմէօն կաթուղիկոսին ում կամենայ՝ հաստատէ կաթուղի-  
կոս, միայն թէ հաստատեալը Գանձասարու աթոռում նստի: Սի-  
մէօն առաջարկեց Յովհաննէսին և Խորայէլին գալ Էջմիածին, և  
նոցանից որք կերգուի ու կրխոստանայ Գանձասարում կենալ, վե-  
րահաստատուելով կաթուղիկոտական իշխանութեան մէջ կրօն-  
ադառնայ իւր աթոռը. Յովհաննէս անմիջապէս ընդունեց հայ-  
րապետի առաջարկութիւնը, իսկ Խորայէլը ոչ, թէև Սիմէօն կա-  
թուղիկոս Աղուանից կաթուղիկոսութիւնը վերապահում էր նորան  
և Վրաց Հերակլ թագաւորի գրով Թիֆլիսի Զաքարիա եպիսկոպո-  
սին ևս հրաւիրակ էր ուղարկել: Երբ Զաքարիան ձեռնունայն վե-  
րադարձաւ, բերելով Խորայէլի ըմբոստութեան թուղթը, Սիմէօն  
Էջմիածնի Տաճարում ժողով գումարելով՝ բանադրեց և լուծեալ  
հրատարակեց Խորայէլին, իսկ Յովհաննէսին 1765 թուի Գեկտեմ-  
բերի 25 ին վերահաստատեց Աղուանից կաթուղիկոտական իշխա-  
նութեան մէջ և ուղարկեց Գանձասար Զաքարիա եպիսկոպո-  
սի հետ\*):

(\*) Զաքարիա զԼ. Ժ. Կր. 80—91:

Այս կնճռոտ խնդրին եւք տալուց յետոյ Սիմէօն ձեռք զարկեց էջմիածնում ա՛յնպիսի շինութիւններ անելու, որոնք իսկապէս մեծագործութիւններ են. Վաղարշապատ գիւղը, որ վանքի արեւմտեան կողմն էր գտնուում և համարեա պատկից էր վանքին՝ բաւական հեռուորութեամբ հիւսիսային կողմը փոխադրեց, և յատուկ ծիսական եկեղեցի շինեց գիւղացւոց համար. Վանքը ելուզակների յարձակումներից պատսպարելու համար ընդարձակ և ամուր պարիսպներով ու բուրգերով շրջապատեց. նորոգեց արտաքին գաւթում եղած շուկան, և Քանապի կոչեցեալ սենեակները ետևի կողմից մի կարգ սենեակներով ևս ընդարձակեց. Մոմտուռն շինեց յարմարաւոր աւազանով և պարագայիւք. Ներսի Ղազարապատը հայրապետանոցից բաժանելու համար երկյարկ մի ապարանք շինեց հայրապետի ամուռն բնակութեան համար. շինեց ամուռնային սեղանատունը, և միաբանութեան սենեակները ու ծածարը խոնաւութիւնից ազատելու համար ստորերկրեայ ջրանցքներ փորել տուեց վանքի և սենեակների տակ, որ միայնելով՝ պարսպից գուրս՝ խառնեց Փիլիպպոս կաթուղիկոս Ազրակեցու շինած ջրանցքին (Սառն - Քանքան): Հարստացրեց էջմիածինը նոր նոր կալուածներ ձեռք բերելով և հներն ևս պարսիկ շահերի հրավարտակներով վերահաստատելով:

Մայր Աթոռը արժանի իւր կոչմանը կրօնական գատտիարակութեան կենտրոն հանդիսացնելու համար 1776 թուին հիմնեց տպարան և տպարանի գործը գիւրացնելու համար՝ շինեց յատուկ թղթատուն եւրոպայից վարպետներ բերելով. իւր գործարանի արտադրած թղթովը տպեց իւր կարգաւորած Տօնացոյցը, և մի քանի իւր հեղինակած գրքեր ու Սաղմսը:

Սիմէօն կաթուղիկոս այս մեծագործութիւնները անումէր այնպիսի ժամանակ, երբ ոչ մի ապահովութիւն չրկար, և ինքն այդ ժամանակը նկարագրումէ ըստ այսմ. «Արդ լաց զգլուխ կաթուղիկոսին, որ յայտնիսում ժամանակի պատահի, որպէս ես», որ գրեմն, ոմբոխեալ մոօք և թշուառական կենօք» (Ջամբու եր. 59):

Այսպիսի աննախանձելի վիճակի մէջ Սիմէօն Դժ Ժաշդ կոչուելու արժանի մեծագործութիւններ կատարեց: Վրաց Հերակլ թագաւորի կրկնակի յարձակմանց ժամանակ (1765 և 1769) երևանայ տիրող Հիւսէյին - Ալի — Խանի կողմից հաշտութեան միջնորդ կարգուելով, երկիրը ազատեց ասպատակութեան աւեր-

մունքից: 1779 թուին, երբ Աիմէօն կաթուղիկոս տկարութեան պատճառով ամառնային տօթ եղանակին գնացել էր Նիզ գաւառը ապահովութեան, Վրաց Հերակլ թագաւորը նորից յարձակուեց Երեւանայ խանութեան վերայ, ի յարգանս Աիմէօն կաթուղիկոսի միայն Եջմիածնին և Վաղարշապատ գիւղին խնայելով, մնացեալ գիւղօրայքը ասպատակեց, աւերեց և ժողովրդին Վրաստան տարագիր անելուց յետոյ՝ պաշարեց նաև Երեւան քաղաքը:

Երեւանայ երկամեայ պաշարման ժամանակ ցաւագար Հայրապետը պարտաւորեալ եղաւ բացօթեայ Վրաց բանակի մէջ մնալու՝ Երեւանայ խանի կողմից հաշտութիւն խօսելու համար, և թէև հաշտութիւն չըկայացաւ Վրաց առաջարկած պայմանների խտուրթեանց պատճառով, բայց վերահաս ձմռան համար Հերակլը վերցրեց պաշարումն և ժողովրդեան ու երկրի մնացորդն ևս աւերելով՝ գնաց Վրաստան:

Յրովհետև միայն Եջմիածնին ու Վաղարշապատ գիւղն էին շէն մնացել, Աիմէօն մարգասիրաբար՝ որոց հարկաւոր էր սնունդ և սերմանիք տուեց, իսկ ինքն սատիկ նեղուելով հիւանդութիւնից՝ 1779 թուի Նոյեմբեր ամսից մոհիմ մտաւ և 1780 թուի Յուլիսի 26 ին, Վարդապետի կիւրակէ օրը կնքեց իւր երկրաւոր բազմադիւն կեանքը և թաղուեց Ս. Գայիտնէի վանքի գաւթում՝ ձախ կողմը, նախ քան իւր մահը, Եջմիածնիւ երկար ժամանակ այնպիսի արհաւիրակից ժամանակին անտերունջ չըմնալու համար, յանձնարարելով կաթուղիկոս ընտրել Եջմիածնի, ի մանկութենէ հետէ բաղմարդիւն միաբան՝ Կարնեցի Ղուկաս արքեպիսկոպոսին, որ Զմիւռնիոյ 12 ամեայ բաղմարդիւն առաջնորդութիւնից վերագարձած լինելով՝ մեծ յարգի և պատուի մէջ էր Աիմէօնի մօտ\*):

### ԳԼՈՒԹ.

II. Եջմիածնի միաբանական ժողովով և Երեւանայ մեծամեծների հաճութեամբ կաթուղիկոս ընտրուեց Ղուկաս Կարնեցի, որ և

(\*) Յիշատակարան «Մեծ Մաշտոց» ին Օծման Կաթուղիկոսի, 26 ռոպորութեան Եպիսկոպոսի և Օրհնութեան սուրբ Միւռոնի, գրեալ ձեռամբ Եփրեմ վարդապետի (յետոյ կաթուղիկոս), Տես Արարատ 1875 թիւ, երես 333—340:

սուրբ օծումն ընդունեց Սիմէօնի մահուան 7րդ օրը\*): Առկասի

(\*) Բարեյիշատակ Առկաս կաթուղիկոսի վերայ զանազան տարապայման կարծիքներ կան. Մ. Վ. Մուրատեան իւր եկեղեցական պատմութեան մէջ գրումէ. « Առկասու վերայ կասկած կըծագի Էջմիածնի միաբանից մէջ, որպէս թէ իւր աշակերտակից Թէքիրդաղցի Սարգիս վարդապետի հետամտութեամբ կամի Հայաստանեայց եկեղեցին միացնել Հռովմայ եկեղեցւոյն հետ: Այս կասկածը երթալով ստոյգ կերպարանք կառնու, ուստի և Առկաս սաստիկ կըխոշտանգուի Էջմիածնի միաբաններէն և կաքսորուի, սակայն ձեռնտուութեամբ Վրաց Հերակլ կայսեր կազատի և գաղտագնաց կըփախչի ի Տփլիս և անտի յԵւրոպա: « Առկասի փախստենէն և մահէն զինի . . . . ( եր. 592 ):

Այս անհետկէթ սխալման մէջ է ընկել Մ. Վ. Մուրատեան՝ Միթարեան ուխտի միաբան Հ. Իգնատիոս Վ. Փափազեանի « Պատմութիւն եկեղեցական » գրքի Առկասին վերաբերեալ պատմական հատուածից, միայն՝ յանդէտս Սարգիս Թէքիրդաղցու վերաբերեալները Առկասին վերագրելով: Ահա այդ հատուածը. « Էր սա ( Առկաս ) յաշակերտութենէ Յարութիւն արքեպիսկոպոսի Բասենցւոյ, և զի հմուտ էր ուղղափառ ճշմարտութեան ուսեալ ի վարդապետէ իւրմէ, աշակերտակից նորին Սարգիս վարդապետ Թէքիրդաղցի գնաց առ նա ի գտանել հնարս միաբանութեան ազգին Հայոց ընդ եկեղեցւոյն Հռովմայ, բայց ի հակառակասիրութենէ միաբանից ոմանց Էջմիածնի չկարաց ի յրումն ածել զիղծս սրտին, այլ մատնեցաւ ի ձեռս նոցա, և խոշտանգեալ պէս պէս չարչարանօք և արքորանօք զամս հինգ, ապա ձեռնտուութեամբ Հերակլի արքային Վրաց գաղտագնաց փախտ'ամբ զերծաւ ի Տփլիս, և անտի յԵւրոպա: Առ նովին ժամանակաւ զնոյն անցս չարչարանաց և մահուան կրեաց և Տէր Սահակ երէց Ասալցիացի, որպէս գրէ նա ինքն Սարգիս վարդապետ Թէքիրդաղցի » ( եր. 936—937 ):

Մ. Վ. Մուրատեանի այս անհետկէթ սխալը հերքել են արդէն Պ. Գալուստ Ընդաղանեան ( Արարատ 1875 ամի եր. 60—63 և 93—96 ) և ձերուին Գարրիէլ Պատկանեան ( Արարատ 1875 ամի եր. 173—175 ):

— Սիմէօնի ժամանակով Կ. Պօլսոյ փոխանորդութեան թեկնածու Արրա-համ արքեպիսկոպոս Աստապատցի Ազուլեայ Ս. Թոմայի Առաքելոյ վանքի մի ձեռագիր աւետարանի մէջ 1793 թուին համառօտումէ Աղա Մահմատ խանի արշաւանքը Առկաս կաթուղիկոսի համար նորա մահից երկու տարի յառաջ գրելով. « Ընդառաջ նորա ( եղբօր Աղա Մահմատ խանի՝ Ալի - Աուլի խանի ) եկն աստուածապատիւ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Առկաս երջանիկ կաթուղիկոսն Ս. Աթոռոյն Էջմիածնի իբրեւ քաջ հովիւ հոգեոց զնեւով զանձն իւր ի վերայ հօտին և հարսին հոգեւորի » ( տես Արարատ 1876 ամի եր. 14—16 ), Բացի բաղմամբիւ և նշանաւոր շինութեաներից, որ Առկաս կաթուղիկոս կառուցել է մինչև իւր մահուան օրը,

ընտրութեամբ դժգոհ մնացին կաթուղիկոսութեան թիկնածու Բասենցի Յարութիւն արքեպիսկոպոս, որ քնաց եւրոպաւ և Տրիեստում:

որոնք ապացուցանումեն, որ նա երբէք կասկածուած և արտաքսուած չէ եղել Էջմիածնի միաբաններից՝ յիշենք որ նա թաղուած է Գայիանէի վանքի գաւթում՝ ձախ կողմը և մարմարենայ տապանաքարի վերայ զրուած է:

« Յարկ դամբարանիս է վեհին մեծի,

Տեառն Ղուկասու կաթուղիկոսի.

Բնիկ գաւառաւ էր սա Պարենցի,

Հանդարտակենցաղ և ջանիւք բարի.

Թէպէտ դիպեցաւ դառն ամանակի,

Պատեցեալ վշտօք ըստ փողոյն մեծի.

Այլ յօրէ կոչման ետ իսկ ի մտի

Շքեղազարդել զգահն հրաշալի.

Որ և ետ ծաղկել կարի սիրալի

Զմէջ Տաճարին Միածնաիջի,

Նաև նորոգել ետ շուրջանակի

Շինեալ և զայլ շէնս՝ որք են իսկ յայտնի.

Ապա ընկալեալ զվախճան բարի,

Գիմեաց առ քրիստոս յոյսն ամենի,

Յորմէ ընկալցի զվարձս բարի,

Եւ յարքայութեան նորին հրճուեսցի »:

« Ամիոփեցաւ յամի Տեառն 1799, ի դեկտեմբերի 29 ի տօնի որդւոցն Որոտման »: ( Տես և Շահ - Խաթունեանի Ստոր. Կաթուղ. Էջմ. հատ. Ա. եր. 279—280 ): Առ այս՝ այսքան:

Հանգուցեալ Մսեր Մադիստրոս Մսերեան իւր՝ « Պատմութիւն կաթուղիկոսացն Էջմիածնի » երկասիրութեան մէջ դրուատելով Ղուկասին ըստ այսմ. « Էր Ղուկաս այր անձնեայ, փառացի, վայելչադէմ, ծանրաբարոյ, քաղցր, ի կենակցութեան և վարժ ի գրաւել զսիրտ այլոց » ( տես եր. 10 ), ունին մատուցանելով բերանացի խօսք ու զրոյցներին՝ համարումէ նորան ընչաքաղց, ուսումնատեաց և ապերախտ: Ընչաքաղց՝ որովհետեւ, որպէս թէ նա բանիրուն նուիրակներ ուղարկելով զանազան կողմեր՝ ոսկի, արծաթ և պատուական քարեր էր կուտում Էջմիածնի գանձարանի մէջ. ուսումնատեաց՝ որովհետեւ, որպէս թէ, նա թղթաշինութեան և տպարանի վերայ հոգս չէ ունեցել, և բանիրուն մարդոց հեռացրել է Էջմիածնից՝ նուիրակութեան պատրուակով. ապերախտ՝ որովհետեւ, որպէս թէ, իւր կաթուղիկոսացման պատճառ Սահակ եպիսկոպոս Գեղամացուն նուիրակ է ուղարկել Վ. Պօլիս և Զմիւռնիա: Պ. Ա. երիցեան ևս, հետեւելով Հանգ. Մագ. Մ. Մսերեանին՝ Ղուկասին անուս և ուսումնատեաց է անուանում. « Նիւթեր Ներսէս Ե - ի կենսագրութեան համար » . եր. 21: Սակայն նոյն երեսում՝ Ներսիսի Յուցակ ծառայականից

վախճանուէց 1776 թուին\*), և Կ. Պօլտոյ պատրիարք Կաղզուանցի Զաքարիա եպիսկոպոս որ լսելով թէ Սիմէօն կաթողիկոսի յանձնարարութեամբ է ընտրուել Ղուկաս՝ Սիմէօնի կարգաւորած Տօնացոյցը հաւաքելով եկեղեցիներէց՝ այրեց, հին Տօնացոյցը նորից տպագրեց ու ցրուեց եկեղեցիներէր վերայ և պատուիրեց Ղուկասի անունը չը յիշել եկեղեցիներում. ստիպյն Ղուկաս սիրով և

հատուածը ընդհակառակն է ապացուցանում. նայելով ժամանակին. ահա. « Եւ զամս 13՝ այն է մինչև ցմատասան ամս պատրիարքութեան երանելի հայրապետին մերոյ Տ. Ղուկասու յարատեւալ ի մէջ ուսումնական աշակերտութեան՝ հմտացեալ է եկեղեցական ուսմանց և Աստուածաշունչ գրոց ևս և արհեստից քերականութեան և ճարտասանութեան իրրե յառաջին աստիճանի ի մէջ ամենայն ազգիս Հայոց ևս և Աստուածաբանական կամ տրամաբանական գիտութեանց ոչ նուազ քան զգտանեցեալսն յազգի մերում » :

Ըստ իս՝ ընդհակառակն Էջմիածնի դանձարանը հարստացնելը՝ ապացոյց է Ղուկասի տնտեսագիտութեանը. բանիւրուն անձանց նուիրակ կարգելը՝ ապացոյց է Ղուկասի իմաստուն վարչութեանը. իսկ եթէ Տպարանը և թղթաշինութեան գործարանը հարկաւոր արդիւնքը չեն արտադրել, այդ ոչ թէ Ղուկասի ուսումնատեցութիւնից է եղել, այլ ժամանակի բերմունքից, և ահա ինչ է գրում այս մասին Հանգուցեալ Յովհաննէս եպիսկոպոս Շահ-Խաթունեան. « Այս երկու գործարանք՝ պարծանք աթոռոյն և ազգին, կային ի հաստատութեան և ի շարունակ գործադրութեան՝ ի ժամանակի անդ կաթողիկոսութեան և փափագելի կենդանութեան նորին Սիմէօնի Երեւանցւոյ. այլ զկնի վախճանի նորա՝ ի պատճառս յարուցման պատերազմաց ի զանազան նահանգակալ իշխողաց ի վերայ միմեանց ի դաշտի աստ Արարատեան՝ շուրջ զայսու պատրիարքական աթոռով, խանդարեցան մեծ մասամբ՝ և զլխովին իսկ գործարանն թղթաշինութեան, զի գոլով արտաքոյ պարսպին, երկաթեայ և պղնձեայ գործիք նորա յափշտակեալ ի զօրաց ասպատակողացն՝ ցիր և ցան եղեն ի հեռաւոր տեղիս, մինչ զի և զձուլեալ տառն տպարանին ի հեռաւոր քաղաքաց գնեալ ի գերջացն հայազգի անձինք՝ վերագարձուցանէին յԱթոռ այսր զկնի պատերազմաց » . . . (Ստոր. Կաթ. Էջմ. հատ. Ա. եր. 99—100) : Բաւական է ի նկատի ունենալ՝ որ Սիմէօն կաթողիկոսի Պարտավճարի Բ. մասը Վրաց Հերակլ թագաւորի 1779 թուին անպատակութեան պատճառով Ղուկասի կաթողիկոսութեան երրորդ տարին տպուեց. (Պարտավճ. վերջաբան 377—383) :

Արեւմտ Տպարանի և զլխաւորութեան թղթաշինութեան գործարանի խանդարուիլը Ղուկասի անուսումնութիւնից չէ եղել, այլ ժամանակի ճախող բերմունքից :

(\*) Երարատ 1875 եր. 173—175 :

խաղաղութեամբ այս խռովութեանց վախճան տուաւ համար կաթողիկոսական օժուան ընդունելուց յետոյ բաւական ժամանակ եկեղեցու կաթողիկոսական աթոռի վերայ չընտեց տպանելով և Պօլսեցւոյ և նոցա պատրիարքարանի հաւանութեանը և սուլթանից ստանալիք հրովարտակին: Զաքարիա պատրիարք և Կ. Պօլսեցիք Առկասի այս զիջումը տեսնելով՝ շուտով հաւանութեան թուղթ ստորագրեցին և սուլթանի հրովարտակը ստացան և ուղարկեցին, իսկ Զաքարիա պատրիարք կորգադրեց եկեղեցիներսւմ յիշել Առկասի անունը և գործադրել Սիմէօնի տօնացոյցը:

Զաքարիա պատրիարք Կաղզուանցի՝ Հայաստանեայց եկեղեցւոյ կարգաց նախանձախնդրութեամբ սկսեց սաստիկ հալածանք ընդդէմ՝ կաթողիկամիս Հայոց, որոնք ազատուելու համար զրոյարտեցին՝ որպէս թէ նա գերմանացւոց դեսպանին յատկացեալ մի թուղթը բաց է արել, այսպիսով Զաքարիան պաշտօնանկ եղաւ և գնաց Բրուսս, իսկ Յովհաննէս Համազանցի կորգուելով պատրիարք, կաթողիկ Հայոց դէմ հալածանքը աւելի ևս սաստկացրեց, յետ նոցա մահուան անգամ նշաւակելու համար՝ բոժոժաւոր սանդխտէն դազազով թողել հրամայելով: Յովհաննէս Համազանցի այս խտուութեան համար տան ամենայն պատրիարքութիւնից յետոյ 1782 Մարտ ամսին պաշտօնանկ եղաւ և նորից պատրիարքութեան հրաւիրուեց Զաքարիա Կաղզուանցին, որ դազարեցրեց հալածանքը ընդդէմ՝ կաթողիկամիաների, ժողով գումարեց պատրիարքարանում և որոշեց որ Հայք Հռովմէական Հայոց հետ խնամութիւն և ազգականութիւն չանեն, և այսպէս մերժելով նոցա Հայոց հետ հազորակցութիւնից՝ յանգէտս թոյլ տուեց նոցա հեռանալ Հայոց եկեղեցիներից և լատինաց եկեղեցիները յաճախել \*):

Ինչպէս Աղուանից նոյնպէս և Սոյ կաթողիկոսները շատ անգամ յաջորդումէին մէկը միւսին ոչ թէ ընտրութեամբ, այլ ազգակցութեամբ: Այսպէս Սոյ կաթողիկոսութիւնը յարատեւումէր Աջապահեան ցեղի մէջ և 1784 թուին Սոյ եփրեմ կաթողիկոս Աջապահեան թուեաւորուելով տեղւոյն այլազգի իշխանից՝ յաջորդեց Թէոփորոս Սսեցի, որ Կ. Պօլսոյ Ս. Աստուածածնի մայր

(\*) Պատմ. Հայոց Ա. Պերպերեան գլ. Ա.

եկեղեցում կաթուղիկոսական օծումն ընդունելուց յետոյ շուտով գնաց Սիս:

Ղուկաս կաթուղիկոս սիրով բոլորի սիրտը ևս շահելուց յետոյ իւր, Էջմիածնի միաբանից, Կ. Պօլսոյ պատրիարքի և տեղւոյն բոլոր հոգեւորական և աշխարհական նշանաւոր անձանց ստորագրութեամբ 1783 թուին սահմանեց կաթուղիկոսին խորհրդակից մի ժողով՝ որի անգամները պէտք է լինէին Էջմիածնի արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները՝ վեց անձինքներից ոչ պակաս \*):

Ղուկաս քաջ իսկ իմանալով որ նուիրականների սպարաքը ոչ միայն ժողովրդի նուէրները հաւաքելն ու Էջմիածին հասցնելն է, այլ ժողովրդին հոգեւորապէս մխիթարելն ու իրանց առաքինի վարքով՝ Էջմիածնի Մայր Աթոռի հետ կապելն է, Էջմիածնի ամենանշանաւոր, և գիտութեամբ ու առաքինի վարքով հռչակեալ միաբաններին նուիրակ ուղարկկց զանազան կողմեր, և այսպէս թէ՛ ժողովրդին շահեց և թէ՛ Մայր Աթոռը, հարստացնելով գանձարանը, որով զանազան շինութիւններ արեց, որպիսիք են եկեղեցու հարաւային կողմը գտնուած խարտեալ քարերով երկյարկ շինութիւնը համբարանոցին յատկացեալ՝ Վեհարանի անկիւնից սկսած մինչև փռնատան անկիւնը, եկեղեցու՝ ի ներքուստ ծաղկեցնելը, և արտաքուստ՝ որմերի հնացած չորս կարգ քարեր փոխելը:

Ղուկաս նշանաւոր անձանց, որպիսի են Սահակ Գեղամացի՝ Կ. Պօլսոյ, Պետրոս Բերթամեան՝ Եւդոկիայի, Նվրեմ՝ Երևանցի՝ Հրեկաստանի նուիրակ կարգելուց յետոյ, բարեկարգեց նաև Էջմիածնի տնտեսական կառավարութիւնը, սակայն Աղուանից կաթուղիկոսութեան և Խամսայի մեղիքների վէճերը, որ ոչ միայն չէին դադարել այլ աւելի ևս սուր ընաւորութիւն էին ստացել՝ նորա հոգացողութեան առարկան դարձան: Խամսայի մեղիքները վստահացած Աւստատանի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսի Ազովեան երկրների կառավարիչ իշխան Գրիգոր Պատեմկենի կողմից արած առատ խոստումներին՝ ժողովուրդեցին Վանձասար՝ Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսի մօտ, խորհուրդ արին ապստամբուել Շուշույ Իրրահիմ խանից և Եկատերինէ Բ. կայսերուհուց պաշտպանութիւն խնդրելու համար մի գիր ևս գրեցին ու յանձնեցին Գրիգոր

(\*) Մսեր Մաղիստ, Մսերեան. Պատմ. Աթղկ. Էջմ. եր. 9—10:

անուն մի ժիր մարդու, որ գաւաղանի մէջ ամբողջած այդ գիրը՝ ծպտեալ աղքատի կերպարանքով՝ հասցնելով Թիֆլիզ՝ սէտք է կայսերուհուն ուղարկէր:

Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Ալլահ - Ղուլի բէկը այս խորհուրդը յայտնեց Իբրահիմ խանին, որ խոստանալով Իսրայէլին կաթողիկոսացնել Քանձասարում՝ առաջարկեց նորան կալանաւորել թղթատար Գրիգորին: Իսրայէլը կատարեց խանի առաջարկութիւնը և Քանձակում բռնելով թղթատարին՝ անձամբ տարաւ Իբրահիմ խանի մօտ. մեկիքները Իբրահիմ խանի վրէժխնդրութիւնից ազատուելու համար Քանձակ փախան, խանի վրէժխնդրութեան դո՛ւ միայն Քանձասարի վանքը և Յովհաննէս կաթողիկոսը մնացին, որ 1786 թուին առանց հարցումարձի, մօրակի հարուածների տակ աւանդեց հողին, իսկ վանքը իւր կալուածներով աւար և կողոպուտ դարձաւ:

Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Սարգիս արքեպիսկոպոսը Քանձասարու մնացեալ գոյքերը ամուր տեղիւր պահելուց յետոյ, 1792 թուին իւր եղբայրների և Քանիէլ եղբօր՝ Բաղդատար որդու հետ փախաւ Քանձակ, և նոյն թուի Դեկտեմբերի 8ին Քանձակում, տեղւոյն Ջաւատ խանի հրամանով առանց էջմիածնի ընդհանրական հայրապետի կանխագոյն հաճութեան ու հաւանութեան, ինքնակոչ և դաւաճան Իսրայէլին հակառակ՝ կաթողիկոս օծուեց:

Սարգիս կաթողիկոսացեալը տեսնելով Ջաւատ խանի թուլութիւնը և խռովութեանց հետզհետէ սաստկանալը 1798 թուին Քանձասարից իւր հետ փախստական մեկիքների և իւր եղբորորդի նորընծայ արեղայ Բաղդատարի հետ գնաց Թիֆլիզ: Վրաց Հերակլ թագաւորը սիրով ընդունեց Սարգսին և նորա հետ եղածներին, և խնամքը, որ ինքն պիտի ցոյց տար՝ իւր մահուան պատճառով ցոյց տուեց իւր ժառանգն ու յաջորդ Յէորդ թագաւորը, Սարգսի ցանկութեան համեմատ խնդրելով Ղուկաս կաթողիկոսից նորան Հաղպատու առաջնորդ կարգել:

Ղուկաս զայրացած լինելով, որ Սարգիս ինքնագլուխ է կաթողիկոսացել, սկզբում չըկամեցաւ կատարել Յէորդ թագաւորի խնդիրը, բայց երբ նա սպառնացաւ էջմիածնի վանականներին չըթողնել Փամիակու ձորն անցնել, զիջաւ. Սարգսին կանչեց էջմիածին, յանդիմանեց նորա ինքնագլուխ կաթողիկոսանալուն

Համար և միայն արքեպիսկոպոսի տիտղոսով ուղարկեց Հազրատ: Առկաս կաթուղիկոս պարտաւորուեց Վէորգ թագաւորի հրովարտակին համեմատ Հազրատու վանահայրութեան հետ և վրաստանի ու Կախեթու առաջնորդութեան իրաւունքն ևս յանձնել Սարգսին, այն պայմանաւ՝ որ Սարգիս վրաց արքունեաց միջոցաւ իւր թեմի և վանքի հաշիւը ներկայացնէ Էջմիածնին: Սարգիս և իւր հետ եղած մելիքները Վէորգ թագաւորի մարդասիրութիւնը վայելեցին՝ մինչև որ Ռուսները տիրապետեցին Թիֆլիզին <sup>1</sup>):

Առկաս իւր հայրապետութեան բազմալրդով ժամանակին հայ աղջկունքը շահի եզրօր կանանոցի համար եղած աղջկաժողովից ազատել ցանկալով՝ թոյլ տուեց մեծի պահոց մէջ ութ տարեկանից վեր բոլոր աղջիկներին ևս պսակել <sup>2</sup>) և 1795 թուին Աղա - Մահմատ - խանի ասպատակութեան ժամանակ իբրև անձնագիր հոյիւ գնաց նորա բանակը և արժանաւորութանկազին ընծաներ, ու չտխաղանց դրամ՝ ներկայացնելով Աղա - Մահմատ - խանին ու նորա գրան մարդոյը, շահեց նորա սիրտը չըլնասել Էջմիածնին <sup>3</sup>):

Թէև Էջմիածինը և շրջակայքը Առկասի նախահոգութեան պատճառով ազատուցին ասպատակութիւնից, սակայն ուռահի Աղա - Մահմատ - խանի՝ կանխաւ Էջմիածնի կայքերից 20 բեռ Բայազէտ և 21 բեռ Թիֆլիզ ուղարկուած լինելով, Թիֆլիզ ուղարկուածը խանի ձեռքն ընկաւ, երբ նա 1795 թուին Սեպտեմբերի 11-ին Թիֆլիզին տիրեց ու ասպատակեց <sup>4</sup>):

Առկաս իբրև իւր հօտին համար հոգացող հայր, շնորհաւորելով Ռուսաց Պօղոս Ա. կայսեր գահակալութիւնը, խնդրեց նորա քարեհաճութիւնը դէպ ի հայոց աղգը, ճանաչելով Էջմիածնի իրաւասութիւնը նաև Ռուսահայոց վերայ, կայսրը յարգեց հայրապետ-

(1) Բաղդասար Մեարագօլիտ Հասան - Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն. (Փորձ աղգային և գրականական հանդէս, Տարի Գ. № V, Մայիս 1880 ամի, եր. 131—164:

(2) Պատմ. Կաթ. Էջմիած. Մսեր. Մագ. եր. 9:

(3) Յիշատ. տես Արարատ 1076 եր. 14—16:

(4) Յիշատ. Արարատ 1876, եր. 14—16 և 1875, եր. 93: Պ. Ա. Երիցեան Թիֆլիզ տարուած Էջմիածնի գոյքը արժէքի 200000 թուման (600000 ռբլ) է համարում. Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար, եր. 7, ծանօթ:

տի զգացմունքը և խնդիրը 1798 թուի Փետրուարին տուած հրովարտակով\*):

Ղուկասի կաթողիկոսութեան վերջին տարին Դամասկոսի կուսակալը Նապօլիօն Ա. նոյ Պաղեստինին հասցրած վնասների տուգանքը ուրիշ քրիստոնեաների հետ երուսաղէմայ Պետրոս պատրիարքից ևս խստիւ պահանջելուն համար՝ պատճառ եղաւ նորա վաղահաս մահուն, որ յառաջացել էր սրտնեղութիւնից: (Բայց ոմանք ևս պնդումեն որ, երբ Պետրոս Ա. Յարութեան տաճարում մի շինութիւն անելու համար վէճ ունենալով Յունաց հետ կուսակալին է գիմել, յոյնք թունաւորել են նորան): Պետրոս վախճանուելով, թաղուեց Յոպպէի Հայոց եկեղեցում:

Ղուկաս իւր բազմալիզով ժամանակին արժանաւորութեամբ՝ մօտ 20 տարի հայրապետական իշխանութիւն վարելուց յետոյ 1799 թուի Դեկտեմբերի 27 ին երկարատե ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանուեց և թաղուեց Ս. Գայիանէի վանքի գաւթում, մայր տաճարի և վանքի մէջ մեծամեծ շինութիւններ կատարելուց յետոյ՝ մի հարիւր հազար թուման (300,000 մանէթ) ևս պատրաստի գրամ թողնելով գանձարանում\*\*):

### ԳԼ. Ժ.

Թիֆլիզի մեծազգի Արղութեան Յովսէփ արքեպիսկոպոսը 1773 թուին Սիմէօն կաթողիկոսից նշանակուելով Ռուսաստանի վիճակաւոր, յընթացս երկարամեայ այս պաշտօնավարութեան Ռուսաց արքունեաց և Հայ հասարակութեան միջև իբրև յարգելի և հաւատարմութեան արժանի անձն յարաբերութեանց միջնորդ դարձաւ:

Յովսէփ արքեպիսկոպոսի յորդորմամբ Խրիմու հայերը մօտ 20,000 անձինք 1777--1778 թուականներին գաղթեցին Ազովեան գաշտերը և երկու տարի մեծամեծ նեղութիւններով վրանառակ լինելուց յետոյ, Դօն գետի հովտում բնակութիւն հաստատեցին, ուր շինեցին Նոր — Նախիջևան քաղաքը և մի քանի գիւղեր և 1779 թուի Նոյեմբերի 14 ին հրովարտակով զանազան

(\*) Պատմ. Վթ. Էջմ. գործ Մս. Մազ. եր. 163—165:

(\*\*) Երարատ 1875 եր. 93:

առանձնաշնորհութեանց հետ իրաւունք ստացան ազգային սովորութեամբ ու մայրենի լեզուով, մի ռուս պաշտօնէի ներկայութեամբ, վարել իրանց գատական և առանին գործերը, առ այս ընտրուած անձանց ձեռքով, յատկացեալ իրաւարանում՝ որ Մագիստրատ էր կոչուած :

Ռուսաց արքունիքը Յովսէփ արքեպիսկոպոսի թախանձանօր վազուց երկնումէր Անդրկովկասը և յատկապէս Հայաստանը ազատել ինքնագլուխ տիրապետող մահմետական խաների բռնութիւնից, ուստի Ազովեան երկիրների և Աստրախանու կուսակալ իշխան Գրիգոր Պօտեմկինն հետամուտ էր լինում ճիշտ և մանրամասն տեղեկութիւններ ունենալ Հայաստանի վերայ : Այս մասին բերանացի լուրերով չրբաւականացած՝ Կովկասին ծանօթ բժիշկ Բէյներգօին ուղարկեց Անդրկովկաս երկիրը լաւ ուսումնասիրելու :

Բժիշկ Բէյներգօն Կովկաս գալով իրան եղած յանձնարարութիւնը փոխանակ լռելեայն՝ կատարելու, Կովկասի ազատութիւնը մահմետական բռնութիւնից որպէս մի կատարուած գործ քարոզելով՝ սկսեց հրաւէր կարգաւ Հայերին դէպ ի Այրարատեան գաւառը, իբրև կենտրոնատեղի Հայոց : Բժիշկը ոգևորութիւն և եռանդըն բորբոքելով՝ կազմեց հայերի, մելիքների և առհասարակ երկրի հանգամանքի նկարագիրը և մանրամասնաբար տեղեկագրելով ներկայացրեց իշխան Պօտեմկինին : Բռնակալ խաները տեսնելով Հայոց արտաքոյ կարգի եռանդը, աւելի ևս սաստկութեամբ սկսեցին նեղել և տանջել նոցա :

Հայերը այս նեղութեանց մէջ չը յուսահատուեցին, որովհետև Յովսէփ արքեպիսկոպոսը իշխան Գրիգոր Պօտեմկինի խոստումներով յուսագրուած՝ յուսագրու մէր տառապող հայերին՝ թէ, նոքա շուտով ազատուելով մահմետականների բռնութիւնից և Վրաստանի հետ միասին Ռուսաստանի ինամակալութեան տակ ազատութիւն կը վայելեն : Հնդկաստանի Հայք ևս ոգևորուած Յովսէփ արքեպիսկոպոսի տուած յոյսերով՝ իւրաքանչիւրը իւր կարեաց չափ աշխատումէր նպաստամատոյց լինել, ուստի ոմն Յակովբ Շահամիրեան « Որոգայթ փառաց » վերնագրով մի գիրք խմբագրեց սահմանելով կանոնները՝ որով պէտք է Հայերը և Վրացիք միմեանց հետ յարաբերութիւն ունենային. խնդրելով Յովսէփ արքեպիսկոպոսին այս գրքից մի օրինակ Նկատարինէ Բ. կայսերու-

հուն ներկայացնել և մի օրինակ՝ Վրաց Հերակլ թագաւորին: Հնգկաքնակ Յովսէփեան էմին և Շամիրխան միլիոնատէր հայերը Յովսէփ արքեպիսկոպոսի միջոցաւ առաջարկումէին իրանց միլիոնները, առանց արիւնհեղութեան Պարսից և Տաճկաց տէրութիւններէյ գնել Հայաստանը և յանձնել Ռուսաց խնամակալութեանը:

Իշխան Գրիգոր Պօտեմկին Ղարաբաղի մէլիքներից ոտացած գոհացուցիչ տեղեկութիւնները ինկատի ունելով՝ մի զօրապետ ուղարկեց Վրաց Հերակլ թագաւորի մօտ՝ որ նորա հետ միասին պաշտօնանկ անեն Ղարաբաղու Իբրահիմ խանին. ամենայն հայոց Ղուկաս և Աղուանից Յովհաննէս կաթողիկոսները որոշեցին առանձին տեսակցութիւն ունենալ, հարկաւոր պաշար հայթայթելու Ռուս զօրքերին, երբ նոքա Հայաստան գալու լինին:

Ղարաբաղի Իբրահիմ խանին պաշտօնանկ անելու գործողութիւն պիտի կատարուէր 1781 թուին, բայց յետաձգուեց. իսկ խանը իրողգած լինելով հայերի մտադրութեանցը, ոկսեց Շուշին աւելի ևս ամրացնել, սաստիկ նեղել և տանջել հայերին: Ահա այս ժամանակից սկսեալ Իբրահիմ խանը կասկածի գնալով՝ իրան գործիք շինեց Աղուանից Յովհաննէս կաթողիկոսի եղբօրը, և նորա դաւաճանութեամբ իմանալով մէլիքների ու կաթողիկոսի ցանկութիւնը, յանձնարարեց Գանձակում եղող ինքնակոչ Իսրայէլ կաթողիկոսին կալանաւորել թղթատարին, որին հետեւեց Գանձասարու աւերումը, Յովհաննէս կաթողիկոսի գանահար լինելով մահը և մէլիքների՝ Սարգիս արքեպիսկոպոսի հետ Վրաց Հերակլ թագաւորին ապաւինելով՝ Հաղբատու վանքում ապաստանարան գտնելը:

Թէև Ռուսք զբաղուած էին Տաճկաց և Շուետացւոց պատերազմներով, բայց Յովսէփ արքեպիսկոպոս քաջալերուած իշխան Գրիգոր պօտեմկինի խոստումներով՝ 1790 թուին գրեց մի դաշնագիր՝ 19 յօդուածներով՝ որով Հայք Ռուսաց խնամակալութեան տակ՝ Ռուսաց հետ պէտք է յարարերութիւն ունենային: Այդ դաշնագրութեան Ա, Բ, և Գ. յօդուածները \*) վերաբերումեն

(\*) «Հայերի մասնակցութիւնը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետութիւնների մէջ»: Գործ Ա. Երիցեանց, տես. «Փորձ գրականական և ազգային հանդէս. Բ. տարի № 1, էջ. 382: Յովսէփ Արղուիթեանի մասին

կրօնական յարաբերութեանց: Այդ յօդուածներով. Ա. Ռուսը և Հայք իբրև քրիստոնեայ եղբարք միմեանց պիտի սիրէին, և խորութիւն չը պէտքէ դնէին ոչ Ռուսը Հայոց եկեղեցւոյ օրինաց և ոչ Հայք՝ Ռուսաց եկեղեցական օրինաց:

Բ. Մի ազգից բաժանուածը իբրև սիրոյ և խաղաղութեան պղտորիչ՝ պիտի ընդունուէր միւս ազգի մէջ:

Գ. Տաճիկներէից և հիթանոսներէից քրիստոնեայ լինել ցանկացողները պէտք է ազատ լինէին ընդունել որ եկեղեցին և կամեանային նորա:

Հայք նոյն և Վրացիք անսահման հաւատումէին Յովսէփ արքեպիսկոպոսին, տեսնելով այն շնորհները՝ որ վայելումէր նա Ռուսաց արքունիքից, յատկապէս բարեկամութեամբ իշխան Գրիգոր Պատեմկինի, որ ցանկութիւն ունէր կովկասեան երկրներին կառավարիչ լինել, բայց իւր ցանկութեան կատարումն չը տեսած 1791 թուին վախճանուեց իմեծ ցաւ Յովսէփ արքեպիսկոպոսի և Ռուսաց օգնութեան սպասող Անդր—Կովկասեան քրիստոնեայ ժողովրդոց:

Թէև Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի նշատակը, որ էր Հայաստանը մահաճեալի մահով ինքնիշխան խաների բռնութիւնից ազատել, չը յաջողուեց, սակայն իւր վերայ եղած մեծ համարմամբն սկսեց կաթողիկոսութեան ձգտել, և դեռ ի կենդանութեան Ղուկաս կաթողիկոսի «Էջմիածնի կաթողիկոսական տեղակալ» տիտղոսը ստանձնեց: Ինքն Ղուկաս կաթողիկոսը և նշանաւոր եպիսկոպոսները նկատելով Յովսէփի թշնամական յարաբերութիւնը Պարսից և Տաճկաց հետ, որոնց հպատակ էին հաշայերը, չէին կամենում՝ նորա կաթողիկոսանալը, որովհետև, այդպիսով հայ ժողովուրդը տիրող պետութեանց վրիժառութեան դոհ պիտի լինէր: Յովսէփ Արղութեան անյողգողդ էր իւր նշատակի մէջ և Ղուկաս կաթողիկոս տեսնելով այս՝ միշտ կրկնելիս է եղել. «Ինձ ինչ մնաց այս աշխարհից՝ որ քեզ ինչ մնայ, Յովսէփ վարդապետ \* ) »:

պատմութիւնը համառօտուած է յատկապէս Պ. Երիցեանի յիշեալ աշխատասիրութիւնից. և Հանգ. Մս. Մագ. Մսերեանի «պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի» մատենից:

(\*) «Նիւթեր Ներսէս Ե - ի կենսագրութեան համար». Գործ. Ա. Երիցեանց. արտատպած «Փորձ» ամսագրից 1877 թուին:

Յովսէփ արքեպիսկոպոսը իւր հովանաւորութեան տակ առնելով Ս. Պետերբուրգում հիմնուած Խաղարեանի տպարանը՝ 1783—1796 թիւը մի քանի կրօնական գրքեր հրատարակեց։ Այս տպարանը նոր — Նախիջևան փոխադրուեց և վերջապէս Աստրախանում հաստատուեց։ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսոյ կոնսիստորեաների կարգով Ռուսաստանում Հայոց մի կոնսիստորիաբայ արեց և 1799 թուի Հոկտեմբերի 28ի բարձրագոյն հրովարտելով՝ 1800 թուին բաց արեց Ս. Պետերբուրգում և Մոսկվայում մի մի Հայոց Հոգևոր Կառավարութիւն։

Ղուկասի մահից յետոյ կաթողիկոսական տիտոն բայի Յովսէփից, Դանիէլ Սաբմաուեցի և Դաւիթ Լնէգէթեցի եպիսկոպոսներն ևս թիկնածուներն էին, և սոցանից ամեն մինը աշխատում էր գրաւել հայրապետական աթոռը յոյս դնելով — Յովսէփ իւր բարեկամների, Վրաց թագաւորի և Ռուսոյ վերայ։ Դաւիթ՝ միաբանութեան փոքրամասնութեան և Երեւանայ Խանի վերայ, իսկ Դանիէլ՝ Եջմիածնի միաբանութեան և ազգի վերայ։

Ղուկասի հէնց մահուան օրը կաթողիկոսական ընտրութեան համար ժողով կայացաւ և երկրորդ օրը ժողովը բարւոյր գտաւ կաթողիկոսացու ընտրել Կ. Պօլսոյ պատրիարք Սաբմաուեցի կամ Բայազէտցի Դանիէլ և Հնդկաստանի ու Ասորախանի նուիրակ եփրեմ արքեպիսկոպոսներին։ Աւստի և ընտրութեան թաւղթը ստորագրելով՝ Եջմիածնի աթոռակալ (տնտեսական մասին կառավարիչ) Դօրզանեան Դաւիթ եպիսկոպոս Լնէգէթեցու ձեռքով ուղարկեց Կ. Պօլիս։

Ժողովը Դաւիթ Լնէգէթեցուն դիտմամբ կարգեց հրաւիրակ որ նա միջոց չունենայ Երեւանում բնակող իւր եղբօր ու նորա աներ Աղամաղեան Մելիք Աբրահամի միջոցաւ՝ Երեւանայ խանի օգնութեամբ կաթողիկոսանալ։

Դեռ Դաւիթ եպիսկոպոս Կարին չէր հասել և ահա Յովսէփ Արշակունի ազգականները Վրաց Գէորգ ԺԲ. թագաւորի միջոցաւ սկսեցին ճնշում գործ զնել Եջմիածնեցւոյ վերայ, որ Յովսէփին անպատճառ կաթողիկոս ընտրեն։ Գէորգ թագաւորը սպառնացաւ որ, եթէ Յովսէփ չընտրուի կաթողիկոս, ժանտախտի սպառնաւով՝ Թիֆլիզ տարուած Ա. Գեղարդը յետ չի գործնիլ։ Եջմիածնեցիք ճարահատեալ սուանձին սուրհանգակով Յովսէփի ընտրութեան համար ևս հաւանութեան մի թաւղթ ուղարկեցին, բայց

առանձինն յայտնելով թէ Յովսէփի մասին հաւանութիւնը առ հարկէ է: Այս իսկ ժամանակ Յովհաննէս Եպիսկոպոս ակնեցի, Ս. Գեղարդը ծածուկ վեր առնելով Թիֆլիզից Ախալցխայի վերայով գաղտ եկաւ հասաւ Էջմիածին:

Կաթողիկոսացու Դանիէլը 1793 թուին Ղուկասից Զմիւռնիոյ առաջնորդ էր նշանակուած, բայց իւր և ժողովրդեան մէջ ծագած խռովութեան պատճառով 1797 թուին թողեց Զմիւռնիան և ըստ յանձնարարութեան Ղուկաս կաթողիկոսի սկսեց Ռումելիայի նուիրակութիւնը, որ 1799 թուին աւարտած՝ երբ Էջմիածին էր վերադառնում՝ Մարտի 11ին Պօլսում Զաքարիա պատրիարքի մահուան և յուղարկաւորութեանը հանդիպեց, ուստի և նոյն Մարտի 15ին ընտրուեց պատրիարք և առաջին գործը եղաւ Սիմէօնի Տօնացուցի նոր տպագրութեամբ ընդհանրացնելը:

Ղորղանեան Դաւիթ Եպիսկոպոսը 1800 թուի Մարտի 18ին հասաւ Կ. Պօլիս, բայց կաթողիկոսական ընտրութիւնը այն տեղ երկարաձգուեց մինչև Ապրիլի 28ը, որովհետեւ թէ ինքն Դանիէլ ախոյեան ունենալով Յովսէփ Արղութեանին դժուարանումէր ընդունել կաթողիկոսութիւնը և թէ Կ. Պօլսեցիք չէին կամենում Դանիէլին կաթողիկոս ընտրելով՝ նոր պատրիարք ընտրելու հոգսի մէջ մնալ, ուստի և Նիկոմիդիոյ առաջնորդ Կապուտիկ կոչեցեալ Բարգուղիմէոս Եպիսկոպոսին ընտրեցին կաթողիկոս, և հրաւիրեցին Կ. Պօլիս. բայց նա ևս հրաժարուեց:

Կ. Պօլսոյ Պալատ արուարձանի քարոզիչ Յովհաննէս Եպիսկոպոս Զամաշրճեան՝ պատրիարքութեան և Դաւիթ՝ կաթողիկոսութեան թիկնածուները, տեսնելով որ Դանիէլի ընտրութեամբ իրանք իրանց նպատակին չեն հասնում, Էջմիածնի նուիրակ ծերունի Գալուստ Եպիսկոպոսին սկսեցին խարբալել, գրգռելով՝ որ նա իբրև Էջմիածնի բազմաժամանակեայ միաբան՝ եթէ ոչ կաթողիկոս, գոնէ պատրիարք պէտք է լինէր բայց մինչև անգամ ընտրութեանց մասնակցելու չըհրաւիրուեց:

Գալուստ սկսեց վրդովուել և վրդովեցուցիչ քարոզներով յուղել նաև ժողովրդեանը թէ, ինքն իբրև բազմաժամանակեայ միաբան Էջմիածնի և ծեր ու արդիւնաւոր Եպիսկոպոս արհամարհուած է կաթողիկոսական ընտրելի չորոշուելովը, մինչդեռ Բարգուղիմէոս Եպիսկոպոս, որ աշխարհական կեանք է վարում՝ կաթողիկոս է ընտրուել:

Հուսկ ուրիմն խռովութիւնը հանդարտեցնելու համար Դանիէլ ըստ Էջմիածնի հանրագրութեան ինքն յանձն առաւ կաթողիկոսութիւնը, և ըստ ժողովրդեան ցանկութեան հրա իրակ Դաւիթ եպիսկոպոսին պատրիարք կարգեց, իսկ Զամաշրճեան Յովհաննէս եպիսկոպոս, որ ինքն էր ցանկանում պատրիարք դառնալ, դարձեալ սկսեց խորբալել Դաշուստ եպիսկոպոսին, և նորա յարուցած խռովութիւնից օգտուելով Կ. Պօլսոյ մեծամեծների օգնութեամբ 1800 Մայիսի 19 - ին պատրիարքութեան իրաւունք ստացաւ եպարքոսից:

Զամաշրճեանը պատրիարքաւիան իշխանութեան հասնելուց յետոյ իբրեւ խռովութեանց գլխաւոր պատժաւների՝ Դաշուստին Լիմնոս՝ իսկ Դանիէլին Տենետոս կղզին արտօրել տուեց, և Կ. Պօլսոյ Ռուստիան ղեկաւան Թամարովի ձեռքով Սուլթանից Յովսէփ արքեպիսկոպոսի կաթողիկոսութեան հրովարտակը ստանալով՝ Դաւիթին յանձնեց Էջմիածին տանելու, որով՝ պատրիարքութեան և կաթողիկոսութեան թեկնածուներին բոլորին ևս հետադրեց Կ. Պօլսից, և Յովսէփին հաճոյանալու համար նախնաւանդ սուլթանութեան հակառակ առանց օժմանն սպարելու Յուլիսի 16 - ից հրամայեց եկեղեցիներում յիշել նորա անունը:

Յովսէփ արքեպիսկոպոս իւր կաթողիկոս ընտրուելու լուրը առնելուց յետոյ Պետերբուրգից Մոսկւայի վերայով գնաց Ասաբախանոսյանեղ Դաւիթ Լէնգէթեցուց ստանալով Սուլթանի հրովարտակը՝ ուղարկեց Ռուսաց Պօզոս կայսեր, և նորանից ևս հաստատութեան հրովարտակ ընդունելուց յետոյ 1801 Փետրվարի 11 ին շքեղ հանդիսով Թիֆլիզ մտնելիս՝ լսելով Վրաց Գէորգ Թագաւորի մահը, հանգուցեալ թագաւորին յուղարկաւորելու համար ուղղակի գնաց Վրաց Սիօն մայր եկեղեցին, ուր և թագաւորի դափաղի վերայ կարգաց յանուն նորա ուղղելով Պօզոս կայսեր հրովարտակը:

Յովսէփին ընդառաջելու համար Թիֆլիզ շտապեցին չորս արքեպիսկոպոսներ, որոց հետ ելբ Յովսէփ պատրաստվումէր Էջմիածին ուղևորուել՝ յանկարծ հիւանդացաւ, և բերանացի խնցրելով իրան Սիմէօն կաթողիկոսի մօտ թաղել՝ յանկարծամահ եղաւ Մարտի 9 - ին, և մինչև քաղաքական իշխանութիւնից թոյլտուութիւն չլինելը իւր կտակին համեմատ Սիմէօն կաթողիկոսի գերեզմանին մօտ Գույիսնէի վանքի գաւթում թաղուելու՝ երէք ամիս անթաղ մնաց:

Դանիէլ 1800 Սեպտեմբերի 28 ին Տենեդոսի արգելանքից ազատուելով՝ Պօլիս չըմանելու համար Յովհաննէս պատրիարքից Եւդոկիայի առաջնորդ էր նշանակուած և 1801 Յունւորի 23 ից արգէն Եւդոկիայում առանց պաշտօնը ստանձնելու սպասուէր Յովսէփի Էմիածին ժամանելուն՝ որ ինքն ևս գալով՝ իւր նուիրակութեան հաշիւը ներկայացնէր, իսկ Դաւուտ Նոյեմբերի 4 ին ազատուած Լիմնոսի արգելանքից՝ շարունակուէր Նիկոմիդիայի նուիրակութիւնը:

Յովսէփի ձեռնասուն աշակերտ Գրիգոր վարդապետ Ագքիրմանցի նկատելով որ, եթէ Դանիէլ կաթուղիկոս դառնայ, ինքն եպիսկոպոս և Ռուսաստանի առաջնորդ չի նշանակուիլ, լուր տարածեց թէ Յովսէփ վախճանելիս՝ կտակել է կամ Կ. Պօլսոյ պատրիարք Յովհաննէս Զամաշըճեանին, և կամ Դաւիթ Լենգէթեցուն կաթուղիկոսայնել. այս մասին գրեց նաև Կ. Պօլսոյ Ռուսական դեսպան Թամարովին, նորա թարգման Գրիգոր Աղայեկեանին և Յովհաննէս պատրիարքին. և հաստատ գիտեալով որ, եթէ հրաւիրակները Էմիածին հասնեն՝ անպատճառ Դանիէլին պիտի ընտրեն կաթուղիկոս, զորոց Վրաց արքայորդի Դաւթին ու այլ պաշտօնէից ի դիպահո՞ պահել նոցա. ռակայն հրաւիրակները իրանց գրութիւնը յայտնելով Էմիածնի միաբանութեան՝ Այանձնարարիցին Դանիէլին միայն ընտրել կաթուղիկոս:

( Նախանգիւն )

Յ. Վ. Մ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ \*).

Որովհետև դաստիարակութեան նպատակը բարոյական է, ուստի բարոյագիտութեան գիտնօրէն ուսումնասիրութիւնը ուսուցչի համար մի առանձին նշանակութիւն ունի, եթէ ուսուցիչ պարոնը բարոյական գաղափարներ ունի, այն ժամանակ նա ոչ թէ միմիայն կրօնի դասատուութեան մէջ

(\*) Այն վերնագրով մի յօդուած գրած է Զուլեյքիայի ուսումնարանների վերատեսուչ Վիս-Բուրդուրք մանկավարժ Դոկ. Դիտտեսի հրատարակած ամսագրում. հեղինակը իւր յօդուածում հետեւում է մեծաւ մասամբ Կիւսմանի բարոյագիտութեան, որից մենք փաղուածօրէն առնելով ուղարկում ենք Զերդ խմբագրութեան: